



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Թ Ի Ի 7

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՄԻԹԻՒՆՔ  
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ  
ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

Բ Ա Յ ՈՒՄ 1874 Ս Մ Ի Ն

ՆԻՍ Է.

25 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1874



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՎԱՅԵԱՆ

1874

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

|               |           |       |
|---------------|-----------|-------|
| 1. Թագէտ      | Եպիսկոպոս | Բ. 2  |
| 2. Գրիգոր     | «         | Բ.    |
| 3. Խորէն      | «         | Բ. Պ  |
| 4. Գարեգին    | Վարդապետ  | Բ.    |
| 5. Խորէն      | «         | Հ. Բ. |
| 6. Մատթէոս    | «         | Բ. 2  |
| 7. Խորէն      | «         | Բ.    |
| 8. Կարապետ    | «         | Բ. 2  |
| 9. Ներսէս     | «         | Բ.    |
| 10. Արքայապետ | «         | Բ. Պ  |
| 11. Հմայեակ   | «         | Բ.    |
| 12. Յովհաննէս | «         | Բ.    |
| 13. Յովհաննէս | «         | Բ.    |
| 14. Գեորգ     | «         | Բ.    |
| 15. Գրիգոր    | «         | Բ. 2  |
| 16. Խորէն     | «         | Բ. 2  |
| 17. Յարութիւն | «         | Բ. 2  |
| 18. Սիւրբիսա  | «         | Բ. 2  |
| 19. Արիստակէս | «         | Բ. 2  |
| 20.           |           |       |

ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ

(Ա. Վիճակ)

Գրողգրայտ, Կեանքի փառք և Գրողգրայտի դրոշմ

|               |              |      |
|---------------|--------------|------|
| 21. Սենեքերիմ | Մ. Մանուկեան | Բ. Պ |
| 22. Պօղոս     | Վասիլեան     | Բ.   |
| 23. Յակոբ     | Յրէնկեան     | Բ. 2 |
| 24. Բարթոլոմէ | Քրիստոսեան   | Բ. 2 |
| 25. Բարդէոս   | Պէկեան       | Բ. 2 |
| 26. Գեորգ     | Ստրատիան     | Բ. 2 |
| 27. Ն.        | Ռուսինեան    | Բ. 2 |
| 28. Պօղոս     | Պանասեան     | Բ. 2 |
| 29. Եսայի     | Անուսեան     | Բ. 2 |
| 30. Մանուկ    | Արապեան      | Բ. 2 |
| 31. Պօղոս     | Ճելաճեան     | Բ. 2 |
| 32. Բարսեղ    | Հարաճեան     | Բ. 2 |
| 33. Գրիգոր    | Պէրպեան      | Բ. 2 |
| 34. Պետրոս    | Քերէտեան     | Բ. 2 |
| 35.           |              |      |
| 36.           |              |      |
| 37.           |              |      |

(Բ. Վիճակ)

Պէրպեան

|                |              |      |
|----------------|--------------|------|
| 38. Կարապետ    | Ս. Իւթիւճեան | Բ. 2 |
| 39. Յարութիւն  | Մարգարեան    | Բ. 2 |
| 40.            |              |      |
| Ենթագրայտ      |              |      |
| 41. Համբարձում | Իփեկեան      | Բ.   |
| 42. Խաչատուր   | Ղազարեան     | Բ.   |
| 43. Կարապետ    | Գ. Փափաղեան  | Բ.   |
| 44.            |              |      |

Իրակիւտար Ս. Խաչ

|             |              |       |
|-------------|--------------|-------|
| 45. Ալեքսան | Խորասանեան   | Հ. Բ. |
| 46. Յովակիմ | Ս. Մարգարեան | Բ.    |
| 47. Սերգէ   | Պասանեան     | Բ.    |
| 48.         |              |       |

Բ. Բացակայութիւն առաջին  
 Բ. 2 Բացակայութիւն երկրորդ  
 Բ. Պ Բացակայութիւն բանաւոր պատճառաւ  
 Հ. Բ. Հրամարեալ

Իրակիւտար Ս. Կարապետ

|               |                |      |
|---------------|----------------|------|
| 49. Ալեքսան   | Սարգսեան       | Բ. Պ |
| 50. Միհրան    | Պահլէրափուլեան | Բ. 2 |
| 51. Յովհաննէս | Ճելաճեան       | Բ. 2 |
| 52.           |                |      |

(Գ. Վիճակ)

Քերտ

|              |              |    |
|--------------|--------------|----|
| 53. Գրիգոր   | Սելիմեճեան   | Բ. |
| 54. Տեղեմուր | Մ. Էրսէրճեան | Բ. |
| 55. Միքայէլ  | Մամիկոնեան   | Բ. |
| 56. Արիկ     | Ունճեան      | Բ. |
| 57. Ստեփան   | Խնդիրեան     | Բ. |
| 58. Նշան     | Քաղաղեան     | Բ. |
| 59. Մարտիրոս | Յ. Տիլեան    | Բ. |
| 60.          |              |    |
| 61.          |              |    |

Գաղտնի փառք

|     |  |  |
|-----|--|--|
| 62. |  |  |
|-----|--|--|

Միջնագիր

|               |                 |    |
|---------------|-----------------|----|
| 63. Յակոբ     | Պ. Նորատունկեան | Բ. |
| 64. Յակոբ     | Կոստանդեան      | Բ. |
| 65. Տեղեմուր  | Էրսէրճեան       | Բ. |
| 66. Յովհաննէս | Պոլաճեան        | Բ. |
| 67. Կարապետ   | Պ. Պերեանց      | Բ. |

Պէրպեան և Գաղտնի

|               |             |    |
|---------------|-------------|----|
| 68. Յարութիւն | Մէրեճ-Գուլի | Բ. |
|---------------|-------------|----|

(Գ. Վիճակ)

Հարգանքներ և Ինստիտ

|     |  |  |
|-----|--|--|
| 69. |  |  |
| 70. |  |  |
| 71. |  |  |
| 72. |  |  |

Գաղտնի

|           |            |    |
|-----------|------------|----|
| 73. Յակոբ | Եւսէնիճեան | Բ. |
|-----------|------------|----|

Ենթագրայտի Մամսիթի

|     |  |  |
|-----|--|--|
| 74. |  |  |
|-----|--|--|

Թոփղայտ

|     |  |  |
|-----|--|--|
| 75. |  |  |
|-----|--|--|

Էրտայ Ս. Եղիս և Ս. Աստուածածին

|     |  |  |
|-----|--|--|
| 76. |  |  |
|-----|--|--|

Գործակալ

|     |  |  |
|-----|--|--|
| 77. |  |  |
|-----|--|--|

Հիսար և Պոլսի գիր

|     |  |  |
|-----|--|--|
| 78. |  |  |
|-----|--|--|

Նոր գիր և Սիմեոն

|           |           |      |
|-----------|-----------|------|
| 79. Ղազար | Հովսեփեան | Բ. 2 |
|-----------|-----------|------|

Պարտ

|               |           |      |
|---------------|-----------|------|
| 80. Մկրտիչ    | Գ. Իսահան | Բ. 2 |
| 81. Յովհաննէս | Կրճիբեան  | Բ.   |
| 82. Յակոբ     | Սարգիսեան | Բ.   |

Քարտիկներ

|               |            |      |
|---------------|------------|------|
| 83. Յարութիւն | Գ. Տատեան  | Բ. Պ |
| 84. Յարութիւն | Զէնճիրճեան | Բ. Պ |

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1874 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Է

25 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1874

ՆԱԽԱԳԱՀ. — ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԻ ԱՏԵՆԱՊԵՏ. — ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՅ ՏԱՏԵԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

1. Բերանկերթիւն և արքայազնի անկախութեան
2. Վաշարացում և որդիների քրեականաց
3. Կարմիրթիւն և Կաթարեանի դիմումաց
4. Արքայազնի Գաղտնիքի ժողովոյ

Ատենը բացուեցաւ ժամը 7 1/2 ին ի ներկայութեան 40 քրեականաց, որոց թիւն ի վերջոյ մինչև 48 հասաւ :

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ՆԱԽԸՆԹԱՑ ՆԻՍՏԻ ԱՏԵՆԱՊԱՐՈՒԹԵԱՆ

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Նախորդ նիստին մէջ ատենագրութիւնը կարգացուած ատեն, ձեր բերանը, Ատենագրութեան պէջ, այնպիսի խօսքեր դրուած էին, զոր ես չլսեցի. այն երեսփոխանը որու ակնարկած էիք այսօր բողոքագիր մ'ալ տուած է. կը յուսամ որ ձեր ապիք բացատրութիւնը այդ խնդրոյն վերջ կուտայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — Սրբազան Հայր, այդ խնդրոյն վրայ նախընթաց նիստի ատենագրութեան ընդունելութենէն վերջը պիտի խօսուի :

Նախընթաց նիստի ատենագրութիւնն ըստ որում դեռ տպագրութեամբ հաղորդուած չէր երեսփոխանաց, կարգացուեցաւ յատենի ժո-

ղովոյն, եւ Ատենագրութեան պէջ հրատարակուեց զերեսփոխանս զխաղութիւն եթէ ունին ընել :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՅ. — Անցեալ նիստին երբ Ատենագրութեան ընդունելութենէն ետեւ կանոնագրութեան 197. յօդուածին յենով խընդրեցի որ ժողովին ներկայանալի թուղթերը կարգացուին եւ արձանագրուին, եւ երբ առժամայ Ատենագրութեան Մէրեճ-Գուլի-էՓ. իրրեւ իմ առաջարկութիւն ժողովին կամացը յանձնեց, դիտել տուի թէ իմ առաջարկութիւնս չէ այն, այլ կանոնագրին պահանջումն է : Ատենագրութեան մէջ չէ նշանակուած այս զխտողութիւնս, որուն արձանագրութիւնը կարեւոր է :

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՅ. — Նախ Ատենագրութիւնը վաւերացնելու համար ժողովին կամքը հարցնելու առաջարկութիւն ըրած չեմ, քանի որ ժողովը սահմանադրապէս անբաւական, հետեւապէս որոշում տալու անկարող կը գտնուի : Երկրորդ իմ բողոքաց արձանագրութիւն խնդրելու առթիւ ըսած խօսքս թերի է, որ պիտի ըլլայ « Աստուծոց արքայութեանը միանգամայն նախընթաց նիստով տրուած որոշումը զեզծեց ժո-

դովը » : Երրորդ՝ Մար Դիւանին արողջացման համար կատարուած համեմատական քուէարկութենէն առաջ իմ ատենադպրական պաշտօն չկատարելէքս յայտարարելով խնդրեցի ժողովէն ինձ քուէ չտալ : Այս կէտը մոռցուած է ատենագրութեան մէջ անցնել :

Ուրիշ զիտողութիւն ընող չըլլալով, Ատենագրութիւնը քուէի դրուելով միաձայն հաստատութեամբ ընդունուեցաւ :

Յետոյ Ատենագիր էֆ. ժողովին կը ներկայացնէ անձնական տկարութեան պատճառաբացակայ եղող երեսփոխանաց անունները, որք են :

- Տ. Խորէն եպիսկոպոս Նարպէյ
- Տ. Հմայեակ վարդապետ Դիմաքսեան
- Սենեքերիմ էֆ. Մանուկեան

Նոյնպէս կը ներկայացնէ բացակայ երկու երեսփոխանաց հետեւեալ նամակները :

Բերա 23 Հոկտեմբեր 1874

Վսեմափայլ Ատենապետ Պէյ

Այսօր կարեւոր գործով մը արգիլուած լինելով յընթերակցել Մեղհանուր ժողովոյ, կը փութամ ներկայիւս ծանուցանել Ձերդ Վսեմութեան եւ պատկառելի ժողովոյ պատշաճեալ Նախաքննիչ Դիւանաց ընտրութեանց մասին, զորս ժողովը իրեն օրակարգ ըրած է այսօր. որոց ընտրելեաց ցանկին մէջ ըստ նոր կանոնագրութեան իմ անունը դրուած տեսայ անցեալ նիստին Մայր Դիւանի կողմէն իբրեւ ընտրելի կալուածոց զիւանի անդամակցութեան :

Ինչպէս որ նախընթաց նիստին մէջ ուրոյն խօսելու պատիւը ունեցայ բարձրաշնորհ Սրբազան Նախագահին թէ կարելի չէ ինձ համար զիւանական ո՛ր եւ իցէ պաշտօն յանձն առնուլ. զի ո՛չ ժամանակ ունիմ եւ ո՛չ կարողութիւն, մանաւանդ կալուածական խնդրոց մասին ճշմարիտը խօսելով ամենեւին բաւական չեմ : Վասն որոյ կը խնդրեմ խոնարհարար Ձեր Վսեմութենէն որ բարեհաճիք ջնջել իմ անունը նոյն ցանկին մէջէն :

Իսկ եթէ երեսփոխանի մը համար ըստ նոր կանոնագրութեան զիւանական պաշտօն մը ընդունիլ անխուսափելի կերպիւ անհրաժեշտ է, պարզաբար ըսելով լուսագոյն կը համարիմ ընտրել Գաստիարակութեան զիւանի անդամակցու-

թիւնը երբեմն : Ինչու որ այն ճիւղը քիչ շատ ինձ ուսում ըրած եմ թէ՛ աստանօր եւ թէ՛ եւրոպա տեսութեամբ եւ հետաքրքրութեամբ : Թերեւս այդ մասին կարող լինիմ գաղափար մը տալ ժողովոյն ըստ իմ կարեաց :

Այսու առթիւ ներուի ինձ ըսել կարծիքս թէ մեր աղգային գործոց ընդհանրապէս հետիտարս երթալուն պատճառներէն մէկն ալ իւրաքանչիւր պաշտօնի յարմար մարդ չընտրելնիս եղած է. եւ երանի՛ թէ անձնիւր պաշտօնեայ ինձ պէս պարզաբար խոստովանի իւր ի՛նչ բանի օգտակարութիւնը. խանգարեալ ժամացոյց մը ժամադրած մը կարող է չլինել. այս ուսմիկ օրինակը ինձ բաւ համարելով կը թողում պատկառելի ժողովոյն իմաստութեանը :

Պատիւ ունիմ լինել Ձերդ Վսեմութեան  
Ամենախոնարհ ծառայ  
ՌՈՒԲԷՆ ԿԻՒՄԻՇԿԵՐՏԱՆ  
ԵՐԵՍՓՈՒՍԱՆ ԱԳՐԻԱՆՈՒՊՈՒՍՈՅ

Ամենապատիւ Նխդ. Սրբազան. Հայր .

Ասիոյ սովատանջ Աղգայնոց օգնութեան Յանձնաժողովոյն մէջ պաշտօն ունենալով եւ հանգանակութեան գործով զբաղեալ չլիտի կարենամ ընդ. ժողովոյ այսօրուան նիստին ներկայ գտնուիլ զոր ծանուցանելով Ձեր բարձր Սրբազնութեան .

Մնամ խորին ակնածութեամբ  
23 Հոկ. 74 Ամենախոնարհ ծառայ  
Կ. Պօլիս ԲԱՐԹՈՂ Մ.  
ՔԻԻՐՔՃԻՊԱՇԵԱՆ

Նաեւ երկու երեսփոխանաց կողմէ եկած հրաժարական գրերը, որք ահաւասիկ .

Ամենապատիւ Սրբազան Հայր .

Ամուս 22 թիւ հրամանագիր Սրբազնութեանդ ստանալու պատիւն ունենալով, խոնարհարար պատասխանել կը փութամ :

Երեսփոխանական փափուկ պաշտօնին համեմատ, աղգայնոց օգտին ծառայութեան համար զգացմանցս հանդարտութեամբ զբաղելու անձնական գործերուս պատճառաւ անբաւականութիւնս նկատելով, առաջի Աղգին պատասխանատուութենէ ազատ մնալու համար, յիշեալ պաշտօնէն հրաժեշտ տալ կը պարտաւորիմ :

Մնամ ամենայն ակնածութեամբ  
24 Հոկտ. 74 Խոնարհ ծառայ ձեր  
Ի Կ. Պօլիս ՅՈՎՀԱՆ ՍԷՍ Մ. ՇԱՄԼԵԵԱՆ

Ամենապատիւ Սրբազան Պատր. Հայր .

Սամաթիացեաց ինձ ցոյց տուած համակրանաց իմ խորին շնորհակալութիւնս յայտնելով՝ ցաւ ի սիրտ ստիպուած եմ Ձեր Սրբազնութենէն խնդրելու որ այս հրաժարականս ընդունել բարեհաճիք. քանզի աղգային գործոց հետամուտ ըլլալու անկարող վիճակի մէջ զբաւեւելուս՝ չեմ կարող խղճի մտօք երեսփոխանական փափուկ պաշտօնը վարել :

Ձերդ ամենապատիւ Սրբազնութեան  
23 Հոկտ. 1874 Խոնարհ ծառայ  
Կ. Պօլիս ՊԵՏՐՈՍ ԹԷԼԼԱԼԵԱՆ

Ատենապետ պէյ վերջին երկու հրաժարականները քուէի դնելով, ժողովը միաձայն հաստատութեամբ ընդունեց :

Յետոյ Ատենագիր էֆէնտի կը կարգայ Իփէկճեան էֆ. թողջբազիրը, որ ահաւասիկ՝

Բարձրաշնորհ Նախագահ Սրբազան  
Աղգ. Մեղհանուր ժողովոյ

Կանոնագրութեան 157 յօդուածին համաձայն ընդ. ժողովոյ հինգերորդ նիստի ատենագրութիւնը վաւերացաւ վերջին նիստին. նոյն յօդուածի զօրութեամբ բացակայ գտնուողք այլ եւս դիտողութիւն ընելու իրաւունք չունին, թէպէտեւ Ձեր Սրբազնութիւնը յայտարարել բարեհաճեցաք թէ Ատենապետ էֆէնտիին՝ իմ բացակայութեանս ինձ դէմ ուղղեալ նախատական սպանալիքք չէք լսած, բայց ատենագրութեան մէջ արձանագրուած էր այն. ալ ասկէ ետքը ոչ ոք իրաւունք ունի զայն ջնջելու :

Արդ՝ մինչեւ որ Վսեմ. Ատենապետ էֆէնտին յատենի ընդ. ժողովոյ չյայտարարէ թէ ինք բնաւ իրաւունք չունէր այդպիսի սպանալիք մ'ընելու, սպանալիք որ որչափ ինձ նոյնչափ եւ ընդ. ժողովոյ անարգանք է, օրինաւոր հատուցում ընդունած չի պիտի համարիմ : Եթէ ժողովը չըողքէ եւ Ատենապետ էֆէնտիէն յետս կոչոււմ չպահանջէ եւ իր լուրջութեամբն ու անտարբերութեամբը իրաւունք տայ անոր, այնուհետեւ այդ սպանալեաց պատասխանատուութիւնը Ձեր Սրբազնութեան եւ ընդ. ժողովոյն վրայ կը ծանրանայ, եւ ես ստիպուած կը լինիմ իբրեւ Աղգ. Երեսփոխան՝ բողբեմ առ Աղգն իր ընդ. ժողովին եւ անոր Սրբազան Նախագահին դէմ :

Մնամ Ձերդ Սրբազնութեան  
19 Հոկտ. 74 Խորին ակնածութեամբ  
Խապիւղ 2. Իփէկճեան

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — Իփէկճեան էֆ. ի յարուցած խնդրոյն պիտի պատասխանեմ համարուած եւ ճշդութեամբ : Վերջընթեր նիստին ատենագրութիւնը նախընթացին մէջ՝ ուր ես ներկայ չէի, կարգացուել է առանց իմ ստորագրութեանս. ինչպէս որ անցեալ նիստին զբողջ յայտներ եմ ժողովոյն : Թէեւ կանոնագրութեան համաձայն երբ ատենագրութիւնը ժամանակին տպագրութեամբ չլինայ ցրուիլ երեսփոխանաց, յատենի ժողովոյն կարգացուելու է, սակայն նոյն կանոնագրութիւնը կ'ենթադրէ որ կարգացուելէ առաջ Ատենապետն ալ աչքէ անցնէ ու ստորագրէ : Արդ յիշեալ ատենագրութիւնը մինակ կարգացուելէն ետեւ ձեռքս հասաւ, եւ իմ խօսքերուս ճշդութիւնը հաստատելու համար քանի մը սրբագրութիւններ ըրի : Կը յուսամ որ այսուհետեւ իւրաքանչիւր նիստի ատենագրութիւնը տպեալ կը հասնի երեսփոխանաց ձեռքը եւ գործին էութեանը ամէնքը ժամանակին տեղեակ կը լլան : Գալով նոյն օրուան իմ ըրած խօսքերուս, ժողովն՝ որ իւր վստահութեամբը զիս պատուած է մինչեւ ցարդ, որոյ վասն դարձեալ շնորհակալ եմ իրեն, զիտէ արդէն թէ իմ պաշտօնավարութեանս մէջ անձնակախութեան ոգի եւ կիրք բանցնելէ միշտ զգուշացեր եմ : Իփէկճեան էֆէնտին քանիցս հեղ խնդրէն չեղեցաւ, ասոր համար պարտաւորեցայ իրեն յիշեցնել տալու. եւ այսուհետեւ ալ քանի որ կանոնագրութեան դէմ ընթացք մը տեսնեմ, բնականաբար պարտ է ինձ նոյն կանոնագրութեանը տուած լռխաւութեան համեմատ վարուիլ : Երբ ատենագրութիւնը հրատարակուի, ամէնքը պիտի տեսնեն իմ խօսքերս, եւ պիտի հասկընան թէ ես իմ պաշտօնիս վերաբերեալ սկզբունքներն ու պարտաւորութիւնները միայն ի գործ դնելու զամ եմ. եւ ասոր ալ նպատակը ինչպէս յայտնի է, ուրիշ բան չէ, բայց եթէ ժողովին ներդաշնակութիւնը պահպանել եւ շիտթութեան տեղի չտալ : Աստիկանութեան խօսքն ըրած ըլլալս չեմ ուրանար, բայց ան կերպով ըսի :

« Երոպայի ժողովներու վրայ շարունակ կը խօսինք եւ այս ալ զխանալու եմ որ երբ չլիտթութիւն ծագի Խորհրդարանին մէջ, մինչեւ իսկ ոստիկանութիւնը կը միջամտէ Նախագահութեան հրաւերովը » :

Այս խօսքերուն սպանալիք կամ անձնականութիւն պարունակելն ու չը պարունակելը ժողովին դատողութեանը կը թողուի :

Ահաւասիկ այս է պատասխանս եւ այժմ զառնանք Օրակարգին :

ԻՓԷԿՃԵԱՆ Է. ԷՖ. — Խօսք կուզեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — Եթէ դարձեալ այս եղելութեան վրայ պիտի խօսիք, կը յիշեցնեմ ձեզ որ ատենագրութեան ընդունելութեան ատեն թէ բողոքող եւ թէ պատասխանող մէկ անգամ կրնան խօսիլ ըստ կանոնագրութեան :

ԻՓԷԿՃԵԱՆ Է. ԷՖ. — Կանոնական զիտողութիւն ունիմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — Խօսքը ԻՓԷԿՃԵԱՆ ԷՖէնտիինն է :

ԻՓԷԿՃԵԱՆ ԷՖ. — Կանոնագրութեան 107-րդ յօդուածոյն համեմատ պարտ կը համարիմ յիշեցնել թէ բացակայութեան հզօր եւ բանաւոր պատճառներն են միայն հարգողութեան, հիւանդութեան, հրէի և անյայտ զեղ եւ ծանր հիւանդութեան : Իսկ անյայտ զեղ արդարացուցիչ պատճառ չհամարուիր միայն թէ ըստ նոր կանոնագրութեան եւ թէ ըստ նախորդ որոշման Ընդհ. ժողովոյ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ստոյգ է արդէն բացակայ պիտի նշանակուին անոնք՝ որ զբաղմունքը պատճառ ցուցած են իրենց այսօրուան բացակայութեանը :

ԻՓԷԿՃԵԱՆ Է. ԷՖ. — (Հարգելիք) Կանոնական ուրիշ կէտեր ալ կան, որոց վրայ նաեւ զիտողութիւն ունիմ : Ես կանոնագրութեան մէջ փնտոեցի թէ կայ արդեօք տրամադրութիւն մը, որ արդիւն ընդունելութեան դնել նախորդ խել մը նիստերու ատենագրութիւնները, եւ չգտայ : Բայց փոխարէն գտայ 18-րդ յօդուածն : որ կը տրամադրէ թէ՛ « Ատենագրութիւնն ուրիշ բան չէ քան նիստի մը մէջ « անցածին ըստ կարի ճիշդ պատկերը : Կիտողութիւն՝ անոր անճիշդ երեւցած կէտերուն « վրայ միայն կրնայ ըլլալ : Կիտողութեան առթիւ անցեալէն թել մը բռնելով անկէ նոր « խնդիր հանելը խնդրէն շեղել է եւ աններեւելի » :

Հիմա անցեալ նիստերու ատենագրութիւնք կան գեղ ընդունելութեան չգրուած, որք պէտք էին ընդունելութեան դրուել ինչպէս վերջին նիստերունը դրուեցան : եւ որովհետեւ յիշեալ յօդուածոյն տրամադրութիւնն ամեն վիճաբանութեանց առաջքը կ'առնու. ուստի ես կը տեսնեմ որ առաջիններն ալ ընդունելութեան դրուուելուն արդեօք մը չկայ, ոչ ալ երկուր կայ վիճաբանութիւն յառնելու : Նոր կանոնագրութեան

տրամադրութեան ոչ միայն դէմ չէ, այլ նաեւ անպատճառ պէտք է նախորդ նիստերու ատենագրութիւններն ընդունելութեան դնել : Սըրբազան Պատրիարք Հայրն այս նոր կանոնագրութեան հարկը տեսաւ եւ ժողովն իրեն համաձայնելով ընդունեց եւ գործադրութեան դրուու. պէտք է որ նա լոկ գրի վրայ չմնայ, այլ անոր տրամադրութեան համեմատ պէտք եղածը գործադրենք :

Գարձեալ կանոնական զիտողութիւն ունիմ ուրիշ կէտի մը նկատմամբ : Կանոնագրութեան 19-րդ յօդուածը կը տրամադրէ որ՝ « Ատենագրութեան ընդունելութեանն էտքը՝ Օրակարգին չանցած՝ Ատենապետը կը հաղորդէ ժողովին անոր վերաբերեալ թուղթերը, եւ ժողովը՝ Ատենապետին առաջարկութեանը վրայ « յղուեցերը կարտասանէ » : Անցեալ նիստին ալ սոյն կանոնական զիտողութիւնն ըրի, սակայն Գիւանը չընդունեց եւ ընդդիմացաւ եկած թուղթերը ժողովին ներկայացնելու : Բացատրելով թէ որովհետեւ Նախաքննիչ զիւանաց կազմութիւնը տակաւին կատարուած չէ, ներկայանալիք թուղթերը յղման պէտք ունենան թերեւ, ուստի եւ հարկ համարեց անոնց ներկայացումն ետ ձգել մինչեւ Նախաքննիչ զիւանաց կազմուելը : Գիւանին անդամներէն մէկն ալ մասնաւորապէս եկաւ ինձ Կանոնագրութեան Յ րդ յօդուածը ցուցուց, որ կը տրամադրէ թէ՛ « Մայր Գիւանին կազմութեանն էտեւ « եթէ ժամանակը չներէ՝ նիստը կը վերնայ, « ութ օրէն վերստին գումարելու պայմանաւ՝ « Նախաքննիչ զիւանաց կազմութիւնն ընելու « համար, որ իբրեւ ատենական խնդիր միշտ « ստիպողական է ժողովին համար, որ չկրնար « գործի սկսիլ իւր զիւանաց կազմութեանն առաջ » : Ասոր վրայ յենելով Մայր Գիւանը մերժեց իմ զիտողութիւնս թէ չկրնար գործի ձեռք զարնել մինչեւ Նախաքննիչ զիւանները չկազմուին : Սակայն իմ պահանջուած գործի ձեռք զարնելու համար չէր. վասն զի Գիւանին մատուցուած թուղթերը ժողովին հաղորդելը գործի սկսիլ ըսել չէ : այլ իմ նպատակս էր Կանոնագրութեան տրամադրութիւնը գործադրել թուղթերը ժողովին ներկայացնելով : Գիւանին կողմէ յառաջ բերուած այս յօդուածին ուժը նոյն իսկ Կանոնագրութեան մէկ ուրիշ յօդուածով կը հերքուի : Յ րդ յօդուածին մէկ պարբերութիւնը կը տրամադրէ որ՝ « Օրինաւորութեան թերութիւն ունեցող տեղեկագիրը Նա-

« խաձեռնութեան Գիւանին կը յղուի, եւ վաւերացումն ուրիշ նիստի կը մնայ » : Պէտք է զիւանալ որ այս յօդուածը ժողովին բացման առաջին նիստին կը վերաբերի երբ Մայր Գիւանը տակաւին չէ կազմուած : այսու ամենայնիւ կըսէ թէ Նախաձեռնութեան Գիւանին կը զրկուի : Միեւնոյն կերպով ալ թէ անցեալ եւ թէ ներկայ նիստին եկած թուղթերը պէտք է որ ըստ 19-րդ յօդուածոյ տրամադրութեան ժողովին ներկայանան եւ արձանագրուին, եւ յղուեցերը մնան Նախաքննիչ զիւանաց կազմութեանն էտեւ : Վերջապէս կանոնական արգելում մը չկայ ըստ իս որ չներկայանան այդ թուղթերը եւ չկարդացուին : մանաւանդ որ անոնց մէջ Հարցումներ ալ կան ուղղեալ առ Վարչութիւնը : եւ ինչպէս որ Կանոնագրութեան 35-րդ յօդուածը կը տրամադրէ, պէտք է որ գոնէ անոնք ներկայանային, բայց անոնք ալ ետ մընացին : Անցեալ նիստին ալ հարցումներ եղան, անոնց ալ կարեւորութիւն չարուեցաւ : ուստի նոյն իսկ Կանոնագրութեան տրամադրութեամբ Գիւանը պարտաւոր է որչափ գրաւոր առաջարկութիւն կայ իւր գրասեղանին վրայ անմիջապէս ներկայացնել ժողովին եւ յետոյ Օրակարգին անցնիլ : Եթէ այսպէս չընենք, քաղաքավարական ցոյց մ'ըրած պիտի ըլլանք Սըրբազան Պատրիարքին եւ ոչ գործ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — Հին ատենագրութիւններն որոց կակնարկէ ԻՓԷԿՃԵԱՆ ԷՖէնտիին, ընական է որ ըստ կարգին ընդունելութեան պիտի դրուին ժողովին մէջ, մանաւանդ որ ընդունելութեան չը գրուելու համար պատճառ մը չը կայ : Գալով Նախաքննիչ զիւանաց խնդրոյն որոյ համար Կանոնագրութեանն յօդուածներ յիշեց ԻՓԷԿՃԵԱՆ ԷՖէնտիին, նոյն կանոնագրութեան 7-րդ յօդուածն այսպէս կը տրամադրէ : « ժողովին մէկ մասը զիւաններու կը բաժնուի, « որոնք տարուէ տարի կը նորոգուին : ժողովն « իր աշխատութեանց զիւրութեան եւ արդիւն « նաւորութեանը համար՝ իր զիւաններուն յաւատուելի ձեռնհասութեանը կը յանձնէ վիճաբանութիւնը » : Արդարեւ կան գրաւոր առաջարկութիւններ : Բայց յայտնի է որ յիշեալ յօդուածոյն տրամադրութեամբ ժողովին խորհրդածութիւնն ու վիճաբանութիւնները զիւրացնելու համար Նախաքննիչ զիւանները պէտք են : կրնայ ըլլալ որ այնպիսի գրաւոր առաջարկութիւն մը գայ ժողովին, զոր ժողովը

հարկ չդատէ յանձնել Նախաքննիչ զիւանաց յիշեալ յօդուածը զայդ նախատեսելով տրամադրած է որ զիւաններուն կազմութեանն էտեւ թղթերը կարդացուին : տակաւին Ընդհանուր ժողովոյն վիճաբանող եւ կարգադրող մարմինները որ իրեն արդիւնաւորութեան գործիքն են, պակաս են : գրաւոր առաջարկութիւնները հարկաւ պիտի ներկայացուին ժողովին, բայց զիւանաց կազմութեանն էտեւ, եւ ժողովն ալ ըստ հարկին պիտի տնօրինէ զոմանս զրկելով եւ զոմանս չըրկելով զիւանաց : ուրեմն մեր պարտքն է Նախաքննիչ զիւանաց կազմութիւնը լրացնել, եւ յետոյ մատուցուած գրաւոր առաջարկութիւնները ներկայացնել, որպէս զի անմիջապէս յղուեցերն ալ արժասանուին ըստ 19-րդ յօդուածոյն Կանոնագրութեան :

Այժմ Օրակարգին համեմատ նորընտիր Երեսփոխանաց վաւերացումը պէտք է մեզ ժողովին հաղորդել եւ ապա յիշեալ զիւանաց կազմութիւնը :

ՎԱԻԵՐԱՑՈՒՄ ՆԱՐԸՆՏԻՐ ԵՐԵՍՓՈՒՅԱՆ ԱՅ

Վարչութեան Քաղ. ժողովէն նոր երեսփոխանաց ընտրութեան մասին եկած տեղեկագիրը կը կարդացուի, որոյ պատճէնն ահաւասիկ :

Վսեմաշուք Ատենապետ Պէյ Ազգ. Ընդհանուր ժողովոյ :

Գատրգիւղի Ընտրողական ժողովոյ տեղեկագրին համեմատ թաղին երեսփոխանական ընտրութիւնը կատարուելով, 108 ընտրողաց 31-ին մասնակցութեամբ երեսփոխան ընտրուած են

Մուրատեան Մկրտիչ Էֆէնտի : Շահպաղեան Կարապետ »

Տրապիզոնի Գաւառական ժողովը երեսփոխանի ընտրութիւնը կատարելով, երեսփոխան ընտրած է՝

Կիրճեան Մկրտիչ Էֆէնտի :

Իզմիտի Գաւառական ժողովը երեսփոխանի ընտրութիւնը կատարելով, երեսփոխան ընտրած է՝

Կիւմուչկերտանեան Տիգրան Էֆէնտի :

Այս ընտրութիւններն ըստ օրինի կատարուած ըլլալով, կը ներկայեմք պատկանելի ժողովոյ ի վաւերացումն, ապահովելով նաեւ ընտրելոց յանձնառութիւնը :

25 Հոկ. 1874  
Ի Գիւանաց Քաղաքական ժողովոյ  
Առէնադէր Առէնադէր  
Մ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Ս. ՄԱՔՍՈՒՏԵԱՆ

Ատենապետ պէյր քուէի կը զնէ սոյն տեղեկագիրը, եւ ժողովն առանց զիտողութեան ձեռամբարձով կ'ընդունի եւ կը վաւերացնէ կատարուած նոր ընտրութիւնները:

Ատենապետ պէյ երեսփոխան կը հռչակէ

- Մուրատեան Մկրտիչ էֆ.
- Շահապետեան Կարապետ »
- Կիւրճեան Մկրտիչ »
- Կիւմրուչկերտանեան Տիգրան »

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ՆԱԽԱՔՆՆԻՉ ԴԻՒԱՆԱՅ

ՆԱԽԱՔԱՆԱԿԱՆ ՄԱՐԿԱՆՆԵՐԸ (Խոստովանել) Փոքր ինչ անձնական տկարութիւն ունենալու համար պիտի մեկնիմ. բայց մեկնելէ առաջ Նախաքննիչ զիւանաց կազմութեան առթիւ խօսք մը ունիմ: Մէկ քանի երեսփոխանաց կողմէ դրաւոր եւ բերանացի դիտողութիւն կը լինի ընտրելի զիւանաց համար. ոմանք շատ կը տեսնեն այս Նախաքննիչ զիւանները: Բայց որովհետեւ կանոնադրութեան մէջ որոշուած են արդէն, եւ կ'առաջարկեմ որ յիշեալ զիւանաց ընտրութիւնն ամբողջապէս կատարուի այժմէն, եւ ի վերջոյ ամենն ի մի բերուին, եւ յորձով հասկցուի թէ հարկ է պահպանել թէ ոչ:

(Սրբաբարձ Նախաքննիչ Կիւմրուչ)

Ատենապետ պէյր Նախաքննիչ զիւանաց կազմութեան համար կանոնադրութեան Յոյսդուածին արամագրութեան համեմատ Մայր Դիւանին կողմէ պատրաստուած ընդհանուր ցանկէն մէկ մէկ օրինակ ամեն երեսփոխանաց ցրուել տալով կը հրաւիրէ ի քուէարկութիւն. եւ կը ծանուցանէ նաեւ թէ զիւանի մը անդամն ուրիշ զիւանի մ'ալ միանգամայն անդամ կրնայ ըլլալ ըստ կանոնադրութեան, ի բաց առեալ ժողովին Ատենապետն, որու չինքնէր կանոնադրութիւնն անդամ լինելու օրինակ զիւաններուն:

Անմիջապէս քուէարկութիւն կ'սկսի, եւ քուէհամարի քննիչ կ'որոշուին վիճակաւ:

- Տէր Սուքիաս քահանայ
- Տէր Յարութիւն քահանայ Սերովբեան
- Ստեփան էֆէնտի Խնդիրեան
- Կարապետ էֆէնտի Իւթիւճեան

Թիւ քուէարկուաց էր 40, Նախագահ Սրբազանով հանդերձ:

Իփէկճեան եւ Պէկեան էֆէնտիները քուէի չմասնակցեցան:

Քուէարկութեան ժամանակ ժողովարանէն մեկնած ըլլալով, քուէարկութեան չմասնակցեցան:

- Մաթթէոս էֆէնտի Ալիքսանեան
- Սարգիս էֆ. Արապեան
- Սիմոն Պէյ Մաքսուտեան
- Սիմոն էֆ. Նորատունկեան
- Միհրան էֆ. Պահէգափուլեան
- Տիգրան էֆ. Սինանեան
- Նշան էֆ. Քաղազեան

Քուէհամարը կատարուեցաւ, եւ 1 քուէթուղթ պարագ ելնելով, մնաց թիւ քուէարկուաց 39. եւ արդիւնքը Քննչաց միջոցաւ ներկայացաւ Դիւանին, որ տնաւասիկ.

Չեմքննիչներն ինքնաւորապէս:

- Տ. Խորէն եպիսկոպոս Նար-Պէյ քուէ 30
- Տ. Յովհաննէս քահանայ Մկրտեան « 26
- Ալթուն Առաքել էֆէնտի « 35

Դատարանի ինքնաւորապէս:

- Կոստանեան Յակոբ էֆէնտի քուէ 29
- Կիւմրուչկերտանեան Ռուբէն էֆ. « 26
- Միքայէլեան Սիմոն էֆէնտի « 25

Կազմուած ինքնաւորապէս:

- Ղազարոսեան Քրիստոստուր էֆ. քուէ 28
- Կիւմրուչկերտանեան Ռուբէն էֆ. « 15
- Եփէնիճեան Յակոբ էֆ. « 12

Հարկուած ինքնաւորապէս:

- Արշակ Յակոբոս էֆէնտի քուէ 37
- Պէկեան Թաղէոս էֆ. « 36
- Ժամակոչեան Պօղոս էֆ. « 27

Յարգելի ինքնաւորապէս:

- Քաղազեան Յակոբ էֆէնտի քուէ 39
- Մամիկոնեան Միքայէլ էֆ. « 36
- Ալմաճեան Համարձուց էֆ. « 27

Ինքնաւորապէս ինքնաւորապէս:

- Տ. Մաթթէոս վարդապետ Կիւմրուչեան քուէ 27
- Տ. Արիստակէս քահանայ Մամբրէեան « 27
- Մազլումեան Յովսէփ էֆէնտի « 35

Նախաքննիչներն ինքնաւորապէս:

- Ռուսինեան էֆէնտի քուէ 39

- Պառնասեան Պօղոս « « 32
- Փափազեան Ստեփան « « 15

Խորհրդարանի ինքնաւորապէս:

- Իւթիւճեան Կարապետ էֆէնտի քուէ 38
- Միսաքեան Խաչատուր « « 37
- Մէրեթի-Գուլի Յարութիւն « « 31

(Այս ժողովն Ատենապետ Կիւմրուչ, Միսաքեան Ստեփան էֆէնտիները չեղան):

Նախաքննիչ զիւանաց ընտրութեան սոյն արդիւնքը Մայր Դիւանին կողմէն ժողովին հաղորդուեցաւ:

Ատենը գոցուելու մօտ Դիւանը կը յայտարարէ ժողովին որ նախորդ նիստին որոշման համաձայն իրենց բացակայութեան համար վերջին ազդագիր ընդունող հինգ երեսփոխաններէն միայն երկուքը ներկայանալով, միւսները դարձեալ առանց օրինական պատճառ մը ծանուցանելու բացակայ կը գտնուին, որք են:

- Աղաբէկեան Սարգիս էֆէնտի (Բ. Ատենապետ)
- Պոյաճեան Յովհաննէս «
- Խօրասանճեան Ալիքսան «

Նոյնպէս կը յայտարարէ թէ եկեղեցական երեսփոխաններէն Տ. Խորէն վարդապետ Երուսաղէմի մնայուն կերպով Երուսաղէմ վերադարձած է:


Ժողովը վերոյիշեալ չորս երեսփոխաններն ըստ օրինի հրաժարեալ կը հրատարակէ:

Աղաբէկեան Սարգիս էֆ. ին հրաժարման պատճառաւ Ռուսինեան էֆ. ըստ կանոնադրութեան Գ. Ատենապետի պաշտօնէն Բ. Ատենապետութեան պաշտօնին կը յաջորդէ, եւ Գ. Ատենապետի ընտրութիւնը կը մնայ յաջորդ նիստին, որ կորոշուի 15 օրէն գումարել, ըստ հետեւեալ Օրակարգի:

1. Ընդունելութիւն նախընթաց նիստի ատենագրութեան.
2. Ընտրութիւն Գ. Ատենապետի.
3. Ամբողջացում Քաղաքական ժողովոյ.
4. Ընդունելութիւն հին ատենագրութեանց:

Ատենը գոցուեցաւ ժամը 10 ին:

ԱՏԵՆԱՊԵՏ Գ. ՍԱՏԵԱՆ





ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ

Կը ճախոշի Ի Դիշանատան Պատրիարքարանի , և կը գտնուշի  
Եկեղեցեաց բանկայները :